Ազրոքաղաքական թեմաներ

Ագրարային ոլորտն ազգային տնտեսության այն ճյուղերի ամբողջությունն է, որոնք զբաղվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ, դրա պահպանման, հումքի վերամշակման և իրացման աշխատանքներով: Ավելի ստույգ՝ այն ամբողջանում է «ագրոպարենային համակարգ» հասկացության մեջ, որն իր մեջ ներառում է հետևյալ 3 ոլորտները. առաջինը բուն գյուղատնտեսությունն է, որն

զբաղվում է գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, երկրորդն այն ճյուղերի ամբողջությունն է, որոնք զբաղվում են գյուղատնտեսական արտադրանքի մթերման, վերամշակման, պահպանման և իրացման աշխատանքներով, երրորդը ենթակառուցվածքներն են՝ ճանապարհատրանսպորտային տնտեսություն, կապ, նյութատեխնիկական մատակարարում և սպասարկում, պահպանման համակարգ և այլն:

Ագրարային քաղաքականությունը նկարագրում է մի շարք օրենքներ, որոնք առնչվում են տնային տնտեսության և օտարերկրյա գյուղմթերքի ներմուծմանը: Կառավարությունները, որպես կանոն, իրականացնում են գյուղատնտեսական քաղաքականություն՝ նպատակ ունենալով հասնել ներքին շուկայում գյուղատնտեսական արտադրանքի կոնկրետ արդյունքների: Արդյունքները կարող են ներառել, օրինակ՝ մատակարարման երաշխավորված մակարդակ, գների

կայունություն, ապրանքի որակ, ապրանքների ընտրություն, հողօգտագործում կամ զբաղվածություն:

Ագրարային քաղաքականության իրականացման գործընթացում մեծ է պետության դերը: Պետության աջակցությունը գյուղատնտեսությանն իրականացվում է բազմաթիվ եղանակներով ու միջոցներով: Գյուղատնտեսության պետական կարգավորումը նպատակ ունի՝

- թուլացնելու բնակչության սոցիալական լարվածությունը,
- կայուն գների միջոցով մի կողմից ապահովելու ֆերմերների նվազագույն եկամուտը, մյուս կողմից թույլ չտալու արտադրության ծավալների այնպիսի կտրուկ փոփոխություններ, որոնք կարող են առաջացնել ճգնաժամային իրավիճակներ,
- շրջակա միջավայրի պահպանության, գյուղմթերքներ արտադրողների և սպառողների անվտանգության ապահովման համար պահանջում են պետական հսկողություն սահմանելու հողօգտագործման համակարգի և մթերքի որակի վրա:

Թվարկված միջոցառումների իրականացման համար պետությունը տնտեսության կարգավորումը կենսագործում է օրենսդրորեն կարգավորված վարչական մեխանիզմներով և տնտեսավարման այնպիսի լծակներով, ինչպիսիք են՝

1) բյուջետային դոտացիաների և հատուցումների վճարումը,

2) ֆերմերային ցածր տոկոսադրույքով կամ երաշխիքային վարկերի տրամադրումը, ա) պետական գնման երաշխավորման սահմանումը, բ)

պետական նպատակային ծրագրերի մշակումն ու իրականացումը առանձին ճյուղերի և շրջանների համար,

գ) հողերի՝ որոշ ժամանակով կոնսերվացումը,

դ) գյուղմթերքների ներմուծման կամ արտահանման խրախուսումը և այլ միջոցառումներ՝ պայմանավորված երկրի առանձնահատկություններով:

Գյուղատնտեսական քաղաքականություն

Գյուղատնտեսական քաղաքականության տեսակների առավել լայն օրինակ կարելի է գտնել Ավստրալիայի գյուղատնտեսության և տնտեսության ռեսուրսների բյուրոյի կոմից հրատարակված «Ագրարային տնտեսությունը Ավստրալիայում և Նոր Զելանդիայում» հոդվածում, որտեղ ասվում է, որ հիմնական խնդիրները և հարցերը, որոնց բախվում է իրենց գյուղատնտեսական արդյունաբերությունը դա՝

- Մարքեթինգային խնդիրներն են և սպառողների նախասիրությունները
- միջազգային առևտրային միջավայրը (համաշխարհային շուկայի կոնյունկտուրայից, առևտրի խոչընդոտները, կարանտինի և տեխնիկական խոչընդոտները, որը ապահովում է շուկայում գլոբալ մրցունակություն ու

հեղինակություն և կենսաանվտանգության կառավարման խնդիրները, որոնց վերաբերում են ներմուծման և արտահանման կարգավիճակ ունեցող հիվանդությունները)

- բիոպաշտպանությունը (վնասատուներ և հիվանդություններ, ինչպիսիք են՝ ուղեղի հյուսվածքի անտրոֆոպիան (BSE), թռչնագրիպը, դաբաղը, ցիտրուսային և շաքարեղեգի խոցը
- ենթակառուցվածքներ (օրինակ, տրանսպորտ, նավահանգիստներ, հեռահաղորդակցություն, էներգետիկա և ոռոգում)
- կառավարման հմտությունները և աշխատանքի շուկայում առաջարկը (բիզնեսի պլանավորման պահանջների խստացման հետ կապված ժամանակակից տնտեսությունների ղեկավարները պետք է ավելի ու ավելի որակավորված և հմուտ լինեն, պետք է բարձրացնել շուկայի իրազեկությունը, կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ համակարգիչները, գլոբալ տեղորոշման համակարգերը, օգտագործել ավելի լավ ագրոտեխնիկական հնարքներ և այլն: Այս ամենի օրինակներ են՝ որակավորված աշխատողների պատրաստումը, աշխատանքային գործունեության համակարգերի զարգացումը, ժամանակակից կապի միջոցներով ապահովումը, շուկայի հնարավորությունների և հաճախորդների կարիքների հետազոտումը, ֆինանսական կառավարումը, գյուղատնտեսական նորագույն տեխնոլոգիաների ռիսկերի կառավարման հմտության հետազոտությունը)
- համակարգումը (գյուղատնտեսության ոլորտի հետազոտությունների և զարգացման ավելի հետևողական ազգային ռազմավարական ծրագիր, գիտական կազմակերպությունների և հետազոտական ծրագրերում ներդրում կատարողների հետ ակտիվ գործունեության պլանավորում, ներդրումներ մարդկային կապիտալում, որը կապահովի որակյալ գիտական կադրեր ապագայում)
- տեխնոլոգիաները (հետազոտություն, ներդրումներ ընդունում, արտադրողականություն, գենետիկորեն մոդիֆիկացված (ԳՄ) մշակաբույսեր)
- ջուրը (հասանելիություն, ջրի արտադրություն, ջրի ապահովում, ջրի վերաբաշխում, սպառողական օգտագործում և այլն)

- ռեսուրսների հասանելիության հարցը (տեղական բուսականության կառավարում, կենսաբազմազանության պաշտպանություն և բարելավում, գյուղատնտեսական ռեսուրսների կայունության արդյունավետություն, հողօգտագործման պարտականություններ)

Աղքատության ծավալների նվազեցում

Գյուղատնտեսությունը մնում է 75 տոկոս գյուղական վայրերում բնակվող աղքատ բնակչության ապրուստի միջոցի և զոյատևման ամենամեծ աղբյուրը: Ուստի ագրարային քաղաքականության կարևոր ասպեկտներից մեկը զարգացող երկրներում գյուղատնտեսության աճի խթանումն է: Բացի այդ, վերջերս արտասահմանյան երկրների զարգացման Ինստիտուտի կողմից դուրս է բերվել, որ գյուղական վայրերում անհրաժեշտ է բարձրացնել տեղեկատվական սպասարկման լավ ենթակառուցվածքների, կրթության մակարդակն աղքատ բնակչության շրջանակում: Այսպես հնարավորություն կստեղծվի գյուղատնտեսություն

աշխատանքների առավել արդյունավետ իրականացում:

Կենսաանվտանգություն

Ժամանակակից գյուղատնտեսական արդյունաբերության կենսաանվտանգության խնդիրները կարելի է ներկայացնել՝

- H5N1-ից սպառնալիքը թռչուններին և մարդուն, որի հարուցումը պայմանավորված է կենդանիների համար օգտագործվող պատվաստանյութերից
- ուղեղի հյուսվածքի անտրոֆոպիայի (BSE) սպառնալիքը խոշոր եղջերավոր անասունների և մարդու նկատմամբ, որի հարուցումը հնարավոր է, խոշոր եղջերավոր անասունների բուծման համար՝ ծախսերը նվազագույնի հասցնելու նպատակով օգտագործվող ոչ բնական (թունավոր) կերակրման արդյունքում
- այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են դաբաղը և ցիտրուսային խոցեր, արդյունաբերության մեջ շահույթ ստանալու խնդիրներ են առաջ բերում, ինչի արդյունքում կարող է դժվարանալ գլոբալիզացիայի գործընթացը:

Պարենային անվտանգություն

Միավորված Ազգերի կազմակերպության Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO) սահմանում է գոյություն ունեցող պարենային անվտանգությունը, երբ «բոլոր մարդիկ ցանկացած ժամանակ ունեն ֆիզիկական և տնտեսական հասանելիություն՝ բավարար քանակով անվտանգ և սննդարար մթերքից օգտվելու համար, որը թույլ է տալիս բավարարել նրանց սննդային կարիքները և համային նախասիրությունները՝ ակտիվ և առողջ ապրելակերպ վարելու համար»: Սննդի անվտանգ համակարգի համար պետք է պահպանվեն չորս պահանջներ, որոնք վերաբերում են ֆիզիկական մատչելիությանը, տնտեսական և

ֆիզիկական հասանելիությանը, ժամանակի ընթացքում մինչև երեք տարրերի պատշաճ և կայուն օգտագործմանը:

Մոլորակի 6,7 միլիարդ մարդուց մոտ 2 միլիարդը տառապում է պարենային անվտանգության բացակայությունից, իսկ քանի որ 2050 թվականին աշխարհի բնակչությունը կաճի մինչև 9 միլիարդ՝ և որպես փոփոխական դիետա արտադրության բարձր էներգետիկ արժեքը ընդգծելու և ընդհանուր սպառումը մեծացնելու համար, պարենային համակարգերն ավելի մեծ ճնշման կենթարկվի: Կլիմայի փոփոխությունը լրացուցիչ սպառնալիք է պարենային անվտանգության համար՝ քանի որ ազդում է բերքատվության, վնասատուների և հիվանդությունների տարածման, եղանակային պայմանների և ամբողջ աշխարհում վեգետացիոն շրջանի վրա:

Այսպիսով, պարենային անվտանգությունն ագրարային քաղաքականության մեջ ձեռք է բերում ավելի մեծ կարևորություն: Պարենային քաղաքականություն մշակողները փորձում են՝ հարմարվելով և հաշվի առնելով կլիմայական փոփոխությունները, նվազեցնել աղքատության և թերսնման մասշտաբները: Գյուղատնտեսական կայուն զարգացման և կլիմայի փոփոխության հանձնաժողովն իրականացնում է մի շարք քաղաքական միջոցառումների՝ պարենային անվտանգության ապահովման և կայուն գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև գլոբալ և ազգային քաղաքականություն՝

էապես բարձրացնելով գլոբալ ներդրումները պարենային համակարգերում, նաև կոնկրետ ծրագրեր և քաղաքականություն է մշակում, որոնք ուղղված են բնակչության առավել խոցելի խմբերին (մասնավորապես, նրանց, որոնք արդեն համարվում են պարենային անվտանգության խոցելի օբյեկտ):

Պարենային ինքնիշխանություն

«Պարենային ինքնիշխանություն» տերմինն առաջարկած Վիա Կամպանսիայի մասնակիցների կողմից 1996թ., որը սահմանում է ժողովրդի իրավունքն իր սեփական պարենային համակարգերի նկատմամբ: Սրա նպատակն է պարենային ինքնիշխանությամբ օժտել այն մարդկանց, որոնք արտադրում, տարածում և

սպառում են սնունդ, պարենային համակարգերի և ռազմավարության մասին գլխավոր որոշումներն իրականացնել նրանց անմիջական մասնակցությամբ, այլ ոչ թե առաջնորդվեն շուկայի և կորպորացիաների պահանջարկով: Այս շարժման մեջ են հանդես գալիս բազմաթիվ ֆերմերներ, գյուղացիներ, անասնապահներ, ձկնորսներ, բնիկ ժողովուրդը, կանայք, գյուղական երիտասարդությունը և բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քաղաքականության գործիքները

Ֆերմերների և ագրոձեռնարկատերերի համար նախատեսված գյուղատնտեսական սուբսիդիաները և կառավարական սուբսիդիաները համարվում են գյուղատնտեսության կառավարման մեթոդներից մեկը, որն օգտագործվում է կառավարության կողմից խառը տնտեսության մեջ: Ի թիվս այլ գործոնների, վճարման պայմանները և առանձնահատուկ սուբսիդիաների տրման պատճառները կարող են տատանվել՝ կախված տնտեսությունից, ֆերմայի չափից, սեփականության բնույթից և երկրից: Հատուկ սուբսիդիաների առաջարկման և աջակցության պատճառ կարող է հանդիսանալ օրինակ՝ քաղաքական նպատակներով հարստացնել գետնանուշի ֆերմաները՝ պահպանելով ցածր գնային մակարդակ՝ խուսափելով անապահով խավի ապստամբություններից կամ օրինակ՝ բերքի արտադրության կայունացումը՝ խուսափելով սոված տարիներից:

Գների կարգավորումը նպատակ ունի խթանել արտադրությունը բարձր և ցածր արժեքների հետ կապված հարցերի ճիշտ լուծումից. Կառավարությունը կարող է կառուցել առևտրային արգելքներ, որպեսզի սահմանափակի ներկրվող ապրանքների քանակը կամ ներքին շուկայում բարձրացնի ներմուծված արտադրանքի գները: Այդ արգելքների միջոցով խթան է ստեղծվում նախապատվությունը տալ

" I get so much subsidy I don't know what to do with it!"

տեղական արտադրության (հաճախ ավելի մատչելի) ապրանքներին:

Շուկայի կարգավորման նպատակները

Ազգային անվտանգություն

Ոմանք պնդում են, որ պետությունները հետաքրքրված են ունենալ բավարար ներքին արտադրական ներուժ, բավարարել ներքին պահանջարկը, որպեսզի խուսափեն գլոբալ մատակարարման խափանման դեպքում ներքին խառնաշփոթից: Օտարերկրյա արտադրողներից սննդի ներմուծման զգալի կախվածությունն երկիրը

պատերազմների, շրջափակման ժամանակ ռազմավարական տեսանկյունից ավելի խոցելի է դարձնում: Ներքին կարողությունների պահպանությունը թույլ է տալիս ապահովել երկրի պարենային ինքնաբավությունը, ինչը նվազեցնում է աշխարհաքաղաքական իրադարձությունների ժամանակ մատակարարման ցնցումների ռիսկը: Ագրարային քաղաքականությունը կարող է օգտագործվել հայրենական արտադրողներին աջակցելու համար ներքին ու միջազգային շուկայում: Դա կարող է լինել կարճաժամկետ խթանող արդյունաբերություն, մինչև բավական չմեծանա, առանց օգնության զարգանալու համար: Կամ դա կարող է լինել մշտական սուբսիդիաներ, որը կարող է ապրանքը մրցակցության մեջ դնել դրսի արտադրության հետ: Դա կարող է մաքուր հաղթանակ հանդիսանալ

կառավարության համար, քանի որ այս դեպքում մեծանում է արտահանումը կամ կրճատվում է ներմուծումը: Այն նաև օգնում է ձևավորելու ազգային առաջարկը և շուկայական պահանջարկը:

Աղքատությունը գյուղական շրջաններում ու դրա հաղթահարումը

Գյուղատնտեսության սուբսիդավորումը հնարավորություն է ստեղծում մարդկանց մնալ և մշակել իրենց հողը և ստանալ որոշակի եկամուտ: Այս ամենն ավելի շատ վերաբերվում է երրորդ աշխարհի երկրներին, որտեղ շատ են գյուղաբնակները, բայց դա կարող է կիրառվել նաև ավելի զարգացած երկրներում, ինչպիսին է Լեհաստանը: Այստեղ բարձր է գործազրկության մակարդակը, բարդանում է գյուղատնտեսական հողերի մշակումը. գյուղացիների մեծ թվաքանակից աճում է նաև սննդի պահանջարկը:

Գների վերահսկումը կարող է օգտագործվել նաև աղքատ քաղաքացիներին օգնելու համար: Շատ երկրներ օգտագործում են սոցիալական աջակցության այս մեթոդը, քանի որ այն ապահովում է քաղաքային բնակավայրերի ամենաաղքատ հատվածների բնակչությանը էժան սնունդ տրամադրել՝ առանց գնահատելու մարդկանց ֆինանսական օգնության տրամադրման անհրաժեշտությունը: Քանի որ գրեթե բոլոր երկրների գյուղերում աղքատությունն ավելի ընդգծված է, քան քաղաքներում՝ նույնիսկ վերահսկելով սննդամթերքի էժան քաղաքականությունը և գները, ընդհանուր աղքատությունը հաճախ ավելի մեծ է երևում:

Շուկայական ինտերվենցիաներին դեմ փաստարկները

Միջազգային առևտրի լեզվով, երբ Ա երկրի ընկերությունը իր ինքնարժեքից ցածր արտադրության ապրանք է վաճառում Բ երկիր՝ կոչվում է «դեմպինգ». Մի շարք երկրներին, որոնք բազմակողմ դրույթներով առևտրային համաձայնագիր են ստորագրել, արգելում են նման պրակտիկան: Երբ հարուստ երկրները սուբսիդավորում են ներքին արտադրությունը, գերազանցող ելքային մասը հաճախ տրվում է որպես օտարերկրյա օգնություն՝ զարգացող երկրներին: Այս գործընթացը բացառում է զարգացող երկրների ներքին շուկայում գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը, քանի որ ապրանքներն անվճար կարող են ձեռք բերվել օգնություն մատակարարող արևմտյան գործակալությունների կողմից: Զարգացող երկրներում, որտեղ նման իրավիճակներն ավելի հաճախ են դրսևորվում, դժվարացնում է փոքր ֆերմերների գործունեությունը, ինչի արդյունքում հաճախ ստիպված են լինում վաճառել իրենց հողը:

Գյուղատնտեսության և առևտրային քաղաքականության ինստիտուտի տվյալներով, եգիպտացորենը, սոյան, բամբակը, ցորենը և բրինձը վաճառվում են ինքնարժեքից ցածր: Դեմպինգային գների օրինակ կարելի է բերել ցորենը, ինչը վաճառվում է ինքնարժեքից քառասուն տոկոսով ցածր:

Անկախության շնորհումը

Շատ զարգացող երկրներ չունեն բավարար քանակով աճերած սնունդ, որպեսզի կերակրեն ամբողջ բնակչությանը: Նման դեպքում այս երկրները պետք է սնունդ գնեն այլ երկրներից: Չնայած տեղական ֆերմերների կողմից առաջարկվող սննդամթերքի վաճառքի անկմանը, անվճար սնունդը և ցածր գները միլիոնավոր քաղցած մարդկանց կյանք են փրկում: Սննդի ավելի մեծ արտադրության համար, զարգացող երկիրը կարող է օգտագործել գյուղատնտեսության բարելավման նոր միջոցներ, որը կօգնի սեփական երկիրն ապահովել պարենով, առանց կողմնակի օգնության: Նոր ջերմոցային մեթոդները, հիդրոպոնիկները, պարարտանյութը, ջրի վերամշակումը, հիբրիդային կուլտուրաները, ստվերի տակ արագ աճող ծառերի հիբրիդները, օդի ջերմաստիճանը վերահսկող սրահներում, մեկուսացված ջերմոցները կամ վրանները, այգիները, արևային լամպերը, և այլ էժան տեխնոլոգիաները կարող են օգտագործվել նախկինում մշակման չենթակա ժայռային, լեռնային, անապատային և նույնիսկ արկտիկական հողերի համար: Սա նույնպես կարող է նպաստել սեփական սննդի արտադրության խթանմանը՝ զերծ պահելով այլ երկրներից կախվածության մեջ գտնվել:

Հացահատիկային մշակաբույսերի փոխարինումը նաև կարող է տնտեսապես անկախ դարձնել ժողովրդին: Շաքարավազն օրինակ ներմուծվում է Պոլինեզիայից: Հաշվի առնելով տվյալ երկրի տնտեսության մեջ շրջանառվող եկամուտները կարելի է օրինակ Պոլոնեզիայից շաքարավազ ներմուծելու փոխարեն շաքար ստանալ շաքարի ճակնդեղից, թխկենու հյութից և այլն: Ծառերի և բամբակի փոխարեն հագուստ և թուղթ կարելի է ստանալ, օրինակ կանեփից: Որպես կանոն Եվրոպայում սովորական պայմաններում չեն կարող աճել արևադարձային արտադրանքներ, սակայն դա կարող է արվել փակ ջերմոցներում կամ վրաններում: Սոյայի մանրաթելերը կարող են փոխարինել պլաստիկը (պատրաստված նավթից): Շատ ներմուծված դեղամիջոցներ կարող են փոխարինվել տեղական պայմաններում աճող արևադարձային բուժիչ բույսերով: Այս ամենը՝ զարգացած և զարգացող երկրների ֆերմերներին հնարավորություն կտա նվազեցնել սուբսիդիաներից կախվածությունը:

Գյուղատնտեսություն և ագրարային քաղաքականություն (ԵՄ)

Գյուղատնտեսությունը համարվում է Եվրոպական Միության (ԵՄ) տնտեսության գերզարգացած ճյուղը, որտեղ տարածաշրջանի բնակչության կարիքները հոգալու համար օգտագործվում է ամենավերջին տեխնոլոգիաները: Դիտարկենք դրա որակական վիճակը բնութագրող ասպեկտների որոշ տվյալներ:

Նոր դարի սկզբին, 2000 թվականին, ՀՆԱ-ն կազմել է 280 միլիարդ եվրո, ավելացված արժեքը՝ 146 միլիարդ եվրո, համախառն ներքին արդյունքի մասնաբաժինը՝ 1.7%: Գյուղական և որսորդական տնտեսությունում աշխատող, ինչպես նաև ձկնաբուծության ոլորտում աշխատողների թիվը կազմել է 6,770,000 մարդ: Ֆերմերային տնտեսությունների թիվը փոքր-ինչ պակաս է 7 միլիոնով, հողատարածքը՝ 130,4 միլիոն հեկտար, որը նախորդ 10 տարիների ընթացքում աճել է 3.5 հա-ով: Գյուղատնտեսությունում սպառման ծավալը 134 մլրդ եվրո է: ԵՄ-ի գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքի տեսակարար կշիռը ներմուծման մեջ կազմում է 5,7%, արտահանման մեջ՝ 6,2%:

ԵՄ-ը սննդամթերքի և գյուղատնտեսական ապրանքների բոլոր խոշոր և այլ տեսակների համար վաղուց հասել է լիարժեք ապահովման՝ ԵՄ-ի անդամ երկրներին կամ նրանց խմբերին տալով որոշակի մասնագիտացում տարբեր տեսակների արտադրության մեջ: Այսպես, կաթի հիմնական մատակարարներն են Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան (ԵՄ-ում արտադրության երկու երրորդը), անասուններ՝ Ֆրանսիա, Գերմանիա: Միացյալ Թագավորություն (ավելի քան 50%), խոզ՝ Գերմանիա, Իսպանիա, Ֆրանսիա (ավելի քան 50%), թարմ մրգեր՝ Իտալիա և Իսպանիա (երկու երրորդը), թարմ բանջարեղեն՝ Իտալիա, Իսպանիա, Ֆրանսիա, Հոլանդիա (ավելի քան 70%), գինի՝ Ֆրանսիա (50%) և Իտալիան (25%), ցորեն՝ Ֆրանսիա և Գերմանիա (ավելի քան 50%), թռչնի՝ Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա (50%), գարի՝ Գերմանիա, Ֆրանսիա: Եգիպտացորեն՝ Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա

և Գերմանիա (մոտ 90%):

Ագրարային հատվածի հաջողությունները և դրա արդյունավետության բարձրացումը հանգեցրեցին նրան, որ ԵՄ-ում գյուղատնտեսական բնակչությունը կայունորեն նվազում է և այժմ կազմում է զբաղվածության ամբողջ ոլորտի 4.3%-ը: Վերջին տասնամյակի ամենամեծ անկումը նկատվել է Բելգիայում, Լյուքսեմբուրգում, Ֆրանսիայում (8-10%): Նիդեռլանդներում, Հունաստանում, Ավստրիայում և Ֆինլանդիայում տարեկան մոտ 4% է: Մեծ Բրիտանիայում մնացել է անփոփոխ, հասնելով գրեթե 1.5% -ի: Պետք է նշել, որ ընդամենը երեք երկրներում ապրում են ԵՄ ֆերմերների ընդհանուր թվի երկու երրորդը: Դրանցից Իտալիայում՝ երրորդ, Իսպանիայում և Հունաստանում՝ մեկ երրորդը:

Բնականաբար այս միտումով կապված է մյուս գյուղատնտեսական ձեռնարկությունների թվաքանակի կրճատումը: Դա տեղի է ունենում անհավասար: Ներկայումս գոյություն ունեցող ֆերմաներն ունեն զգալի տարբերություններ տարբեր երկրներում: Հողատարածքների չափը, ընդհանուր առմամբ, ընդգրկում է 5-40 հա-ից պակաս:

Փոքր և շատ փոքր չափերի ֆերմաները՝ սկսած 4-8 հեկտար հիմնականում պատկանում են տարեց ֆերմերների, որոնց ավելի քան 60% -ը 55 տարեկանից բարձր է: Այսպիսիք բնորոշ են Հունաստանի, Իտալիայի, Պորտուգալիայի և Իսպանիայի որոշ շրջաններին (մինչև 75%), մյուս երկրների մեծ մասում՝ 25-30%, երեք

երկրներում 10% -ից պակաս: 15-17 հա փոքր չափերով ձեռնարկությունները գտնվում են Ֆլանդրիայում (Բելգիա) և Նիդեռլանդներում (երկրի հյուսիսում), որոնք մասնագիտացված են մրգերի, բանջարեղենի և ծաղիկների աճեցմամբ, կենդանիների ինտենսիվ պահման մեջ: Հարավային Գերմանիայում (Բավարիա, Բադեն-Վյուրտինգ, Ռայնլանդ-Պալատինատ) զարգանում է դիվերսիֆիկացված գյուղատնտեսությունը և այլ լրացուցիչ արդյունաբերություն:

Միջին և մեծ չափի ֆերմաները՝ 17-ից մինչև 67 հա, բնորոշ են Իռլանդիայի, Բենիլյուքսի, Գերմանիայի, Դանիայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի գյուղատնտեսական տնտեսությանը:

Խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները հիմնականում գտնվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության արևելյան շրջաններում, Մեծ Բրիտանիայում, Դանիայում և Ֆրանսիայում: Չնայած նրան, որ Արևելյան Գերմանիայում ձեռնարկությունները սեփականաշնորհվել են, եվրոպական չափանիշներով նրանք դեռևս մեծ են՝ ավելի քան 200 հեկտար: Մեծ Բրիտանիայում ֆերմաների միջինը կազմում է ավելի քան 70 հա, և դա այդպես կայուն է 1989 թվականից, ինչպես նաև ձեռնարկությունների թիվը: Նրանց սեփականատերերի կեսից ավելին 55 տարեկանից բարձր է (բացառությամբ Շոտլանդիան): 100 հեկտար հողատարածքով տնտեսությունների թիվն առավելագույնն ունեն Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան (ավելի քան 10%):

Անասնապահական տնտեսությունների չափը տարբեր երկրներում զգալիորեն տարբերվում է: Օրինակ՝ կաթնատու կովերի քանակը Հունաստանի և Պորտուգալիայի մեկ ֆերմայում տատանվում է մոտ 7, Դանիայում և

Նիդեռլանդներում՝ 44-45 և Միացյալ Թագավորությունում՝ 70-ի սահմաններում: Խոզերի միջին թիվը կազմում է 15 Պորտուգալիայում, 25 Հունաստանում, մինչև 600-650 Միացյալ Թագավորությունում, Իռլանդիայում և Նիդեռլանդներում:

Ագրարային քաղաքականության ճկունություն, որպես հաջողության հիմք

Եվրոպական համայնքի գյուղատնտեսության ոլորտի ձեռքբերումները հետևողական, բայց միևնույն ժամանակ ճկուն գյուղատնտեսական քաղաքականության իրականացման արդյունքն է: Համընդհանուր շուկայի ձևավորման պահից գյուղատնտեսությունն առաջնային մտահոգություն էր միջպետական և պետական պետությունների համար:

1960-ականների ընթացքում միասնական ագրարային շուկայի ստեղծումից հետո, ԵՄ-ն ստանձնեց ագրարային քաղաքականության բոլոր հիմնական խնդիրների դուրս բերումը: Առաջնահերթ սա վերաբերում էր շուկային, գնին, արտաքին առևտրին և ամենակարևորը կառուցվածքային քաղաքականությանը: Սակայն, ԵՄ անդամ պետությունները գյուղատնտեսական խնդիրների լուծումն

իրականացրել են ոչ միայն գյուղատնտեսական քաղաքականության շրջանակներում, այլ նաև դրա սահմաններից դուրս: Քանի որ ագրարային տնտեսության մեջ ճյուղայինը և տարածքայինը միաձուլված են, ժամանակի ընթացքում հարցը սկսեց վերաբերվել ոչ թե գյուղատնտեսական խնդիրների, այլ գյուղական վայրերում դրա զարգացման խնդիրներին, որտեղ զբաղվածությունն ավելի շատ գյուղատնտեսական է, որի արդյունքում սահմանափակվում է արտադրողականության աճը բարձրացնելու և բնակչության եկամուտը մեծացնելու համար արմատական փոփոխություններ իրականացնելու հնարավորությունները: Հետևաբար, խոսելով Եվրամիության ժամանակակից գյուղատնտեսական քաղաքականության մասին, մենք պետք է հասկանանք, որ այն կառուցվել է և կառուցվում է տարածաշրջանային, առաջնահերթ կառուցվածքային, քաղաքականության հիմքի վրա, որի հիմքը դրվել է 50-ական թվականների վերջին:

Ինչ վերաբերվում է գյուղատնտեսությանը, իր հիմնադրման օրից ԵՄ-ն ագրարային քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ընդլայնել արտադրողականությունը և ֆերմերների եկամուտները, շուկայի կայունացումը և սպառողներին որակյալ սննդամթերքի մատուցումը, որը կլինի հիմնականում իրենց արտադրությունը և կվաճառվի հնարավորինս մատչելի գներով: Դրա հիմնական գործիքներն են՝ միջամտությամբ պահպանել շուկայական գները, մաքսատուրքերի փոխհատուցման կիրառումը և արտահանման սուբսիդիաները, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի արտադրողների և սպառողների համար նախատեսված դրամաշնորհնեն ու սուբսիդիաներ:

1975 թվականին ստեղծվում է Եվրոպական տարածաշրջանային զարգացման հիմնադրամը (European Regional Development Fund - ERDF), որը ԵՄ-ի անդամ պետությունների բյուջետային ներդրումների մի մասը վերաբաշխում է ամենաաղքատ շրջանների զարգացման օգտին: 1986 թվականին ԵՄ-ի երկրների կողմից հիմք է դրվում եվրոպական առանձին ակտի՝ հարավային երկրներում և այլ թերզարգացած շրջաններում միասնական շուկա ստեղծելու բեռի թեթևացման ուղղությամբ:

1992 թվականին տեղի է ունեցել գյուղատնտեսական քաղաքականության վերակազմավորում, որի մեջ ներառվեց հատուկ մշակաբույսերի համար վճարների փոխհատուցում ուղղակի սուբսիդիաների տեսքով (հացահատիկային, և այլն), պարգևավճարներ՝ անասնապահական կենդանիների գլխաքանակի համար (անասունների և ոչխարների), ինչպես նաև արդյունավետ արտադրության կարգավորման համար: Այս բարեփոխումը նպաստել և նպաստում է արտադրական

մեթոդների զարգացման ծավալին, ինչն ավելի շատ է համապատասխանում բնապահպանական պահանջներին և փոխհատուցում է այն ֆերմերների եկամուտների կորստին, ովքեր դրանք կիրառում են:

ԵՄ գյուղատնտեսական քաղաքականության բարեփոխման անհրաժեշտությունը պայմանավորված էր բազմաթիվ խնդիրներով: Գյուղատնտեսական սուբսիդիաների մասնաբաժինը կազմում է իր արտադրության արժեքի մոտ 50%-ը՝ ԵՄ-ի տարեկան բյուջեի մոտ կեսը (ավելի քան 42 միլիարդ եվրո): ԵՄ-ում սպառողները ստիպված էին վճարել ավելի բարձր (գրեթե կրկնակի) գին սննդի համար, մասամբ այն պատճառով, որ շատ գումարի մեծ մասը գնում էր ֆերմերների համար սուբսիդիաներին, մասամբ էլ պայմանավորված էր այն հանգամանքով, որ արտասահմանյան արտադրողների հետ մրցակցության ընթացքում բախվում էին այնպիսի խոչնդոտների ինչպիսիք են օրինակ՝ սակագները: Այս հանգամանքում հատկապես տուժում էր ցածր եկամուտ ունեցող բնակչությունը:

Բացի այդ, Եվրամիության միասնական ագրարային քաղաքականությունը (EAP) խոչնդոտում էր զարգացող երկրների տնտեսական աճին:

Բացի վերը նշված փաստերից, բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև հետևյալ գործոններով՝

- համաշխարհային գյուղատնտեսական շուկայում միջին ժամկետում գների աճի կանխատեսում: Երաշխավորված գների մակարդակը չափազանց բարձր էր ԵՄ-ի համար և միջազգային համաձայնագրերին համապատասխանեցնելու ու համաշխարհային շուկաների ընդլայնման առավելությունից օգտվելու համար, կար ռիսկ, որ կրկին կհայտնվեն ավելցուկներ և կմեծացնեն բյուջետային միջոցների հավելյալ ծախսերը:

- մի տարածաշրջանում գյուղատնտեսության դերի կրճատումը, իսկ մյուսներում գյուղատնտեսական մեթոդների չափազանց ինտենսիվ կիրառումն առաջանում է մարզերի և արտադրողների միջև գյուղատնտեսական աջակցության անհավասար բաշխումից, ինչը հանգեցնում է շրջակա միջավայրի աղտոտմանը, կենդանիների հիվանդությունների և սննդամթերքի անվտանգության նվազեցմանը:

- ԱՀԿ կանոնների համաձայն ԵՄ-ն անհրաժեշտ է գյուղատնտեսական ոլորտը նախապատրաստել մրցակցություն միջազգային մակարդակով,

- քանի որ դիմող երկրների տնտեսությունները մեծապես կախված են գյուղատնտեսությունից, Եվրամիությունը կարիք ունի ընդլայնման, որը շուկայի կառավարումն ու դաշինքի պարզեցման միջոցները դարձնում է անհրաժեշտ:

1997 թվականի հուլիսին ԵՄ հանձնաժողովը ներկայացրեց AGENDA-2000 (Օրակարգ 2000) կոչվող ագրարային քաղաքականության բարեփոխման առաջարկությունների փաթեթ: Այն փաստում էր, որ եվրոպական գյուղատնտեսությունը պետք է լինի բազմաֆունկցիոնալ, կայուն և մրցունակ տնտեսություն, որը զարգանում է ողջ ԵՄ-ում, ներառյալ կոնկրետ խնդիր ունեցող տարածաշրջաններում: Բարեփոխումները պետք է հանգեցնեին ողջամիտ տնտեսական որոշումների, որոնք հուսալի էին և հաշվի էին առնում սոցիալական

ասպեկտները և ստեղծում՝ համապարփակ եկամուտ ստանալու հնարավորություններ:

Բեռլինում կայացած Եվրոպական խորհրդի նիստում ձեռք բերված պայմանավորվածությունը հստակեցրեց մոտ ապագայում գյուղատնտեսության եվրոպական մոդելի կոնկրետ ձևը: Եվրոպական խորհուրդը հաստատեց, որ բարեփոխումների բովանդակությունն երաշխավորում է Եվրոպայում կենսունակ և մրցունակ գյուղատնտեսություն, այդ թվում, այն շրջաններում, որոնք զգում են և դժվարություններ ունեն զարգացման գործընթացում: Այն կկարողանար աջակցել բնական լանդշաֆտներին և գյուղական վայրերին, կարևոր դերակատարություն ունենալ գյուղական համայնքների կայունությանը և բավարարել սպառողի պահանջները՝ ապահովելով սննդի որակը և անվտանգությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և բարեկեցության չափանիշների պահպանումը:

Հանձնաժողովի առաջարկությունները, որոնք ընդունվել են Եվրախորհրդի կողմից (1992 թվականին) բարեփոխումների հիման վրա, ապահովել են ավելցուկային արտադրանքի և վճարումների կառավարման արդյունավետ նվազեցում՝ չվտանգելով ֆերմերների եկամտի միջին տարեկան աճը՝ 4.5%: Սա հաստատեց Եվրոպական Խորհրդի ընթացքը՝գյուղատնտեսության մրցունակության պահպանման՝ բավականին մեծ գների իջեցման առումով, ֆերմերների եկամուտների երաշխավորված աճի և համաշխարհային շուկայում գյուղատնտեսության դերի բարձրացման վերաբերյալ:

Ապակենտրոնացման այս նոր փուլն ուղեկցվում է գյուղական զարգացմանը կարգավորող կանոնների պարզեցմամբ՝ մեծ քանակությամբ հանձնարարականներ

տալու, մասնավորապես, հացահատիկային մշակաբույսերի արտադրության վերաբերյալ: Օրենսդրությունը դարձել է ավելի հստակ, թափանցիկ և մատչելի: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տավարի և հորթի մսի, կաթ և կաթնամթերքի, ծխախոտի, ձիթապտղի ձեթի և գինու, ինչպես նաև հացահատիկի արտադրության կարգավորման և մարքեթինգի ուղղությամբ:

ԱԳ-ի զարգացման երկրորդ հիմնական կարևոր ուղղությունը բարեփոխված գյուղական տարածքներն են, այսինքն իրականացնում է միասնական քաղաքականություն՝ ընդհանուր միջոցառումների միջոցով, որոնք ապահովում են բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ գյուղական տարածքների զարգացմանն ուղղված գնի ու շուկայի շրջանակներում ընդլայնված համագործակցություն և քաղաքականություն՝ հատկապես տեղական մակարդակում: Առաջնային խնդիրներից են ՝

- գյուղատնտեսական ձեռնարկությունների արդիականացում,
- սննդամթերքի անվտանգության և որակի բարելավում,
- ֆերմերների արդար և կայուն եկամտի ձեռքբերում,
- շրջակա միջավայրի պահպանություն,
- գյուղական վայրերում միգրացիան նվազեցնելու նպատակով բնակչության համար այլընտրանքային զբաղվածության հնարավորությունների ստեղծում,
- գյուղերում տնտեսական և սոցիալական կառուցվածքի հզորացում,
- ապրելու և աշխատանքային պայմանների բարելավում,
- գյուղական վայրերում հավասար քաղաքականության հնարավորությունների խթանում:

Գյուղական տարածքների զարգացումը և նշված խնդիրների լուծումը ներառում է միջոցառումներ շարք, որը կարելի է միավորել երկու մեծ խմբերի՝ 1992 թ.-ի բարեփոխումները շարունակող միջոցառումներ (նախաթոշակային կարգավորման, գյուղատնտեսական քաղաքականության միջոցներով շրջակա միջավայրի պահպանումը, անտառապատման և վատ զարգացած գյուղական տարածքների աջակցում և խթանում), և գյուղատնտեսական ձեռնարկությունների արդիականացման և դիվերսիֆիկացման միջոցառումների իրականացումը: Սա իրենից ենթադրում էր դրանց մեջ

ներդրումների խթանումը, երիտասարդ ֆերմերների համար գյուղատնտեսական ֆերմաների մասնաճյուղերի ստեղծումը, մասնագիտական ուսուցումը և վերապատրաստումը, ինչպես նաև գյուղատնտեսության կառուցվածքում ընդհանուր փոփոխությունների նպաստումը:

Ինչ վերաբերվում է կենսաթոշակային կանոնակարգի կարգավորմանը, պետք է նշել, որ 55 տարեկանում, երբ ֆերմերները դեռ չեն հասել կենսաթոշակային տարիքի, ևս տասը տարի առնվազն կարող են ակտիվորեն աշխատել և զբաղվել գյուղատնտեսությամբ, որի արդյունքում հնարավորություն ունեն լավ նպաստ ստանալ: Սա վերաբերում է նույն տարիքի բոլոր գյուղատնտեսական աշխատողներին՝ ներառյալ ֆերմերների ընտանիքի անդամներին և աշխատակիցներին: Պարտավորությունների չափը կախված է

ձեռնարկության շահութաբերությունից և ներառում է ֆերմերներին ոչ գյուղատնտեսական նպատակներով գյուղատնտեսական հողերի օգտագործման համար վճարումներից օրինակ՝ անտառների տնկման կամ պաշարներ ստեղծելու համար: Ֆերմերները մինչև 75 տարեկանը կարող են նպաստ ստանալ մինչև 15 000 եվրո՝ յուրաքանչյուր տարի (առավելագույնը 150 000 եվրո): Եթե ֆերմերն արդեն ստանում է կենսաթոշակ, ապա նպաստը տրվում է որպես լրացուցիչ կենսաթոշակ: Գյուղատնտեսական աշխատողների մնացած կատեգորիաները կարող են տարեկան մինչև 3500 եվրո (մինչև 35 հազար եվրո) ստանալ մինչև պաշտոնական կենսաթոշակային տարիքը:

Ֆերմերները, որոնք առնվազն հինգ տարվա ընթացքում իրականացնում են էկոլոգիապես մաքուր սննդի արտադրություն, իրավունք ունեն ապավինել այն սուբսիդավորմանը, որը վճարվում է էկոլոգիապես մաքուր բնական տարածքների և լանդշաֆտների պահպանման համար: Սուբսիդիայի չափը որոշելիս հաշվի են առնվում հողագործի եկամտի կրճատման չափը, լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև այլ խթաններ, որոնք անհրաժեշտ են ֆերմերներին էկոլոգիապես մաքուր ուղղվածության արտադրանքի համար: Վճարները չպետք է գերազանցեն 600 եվրո, մեկ մշակաբույսերի մեկ հեկտարի կամ մեկ հեկտարի մշակաբույսերի մեկ տարում բերքի ամբողջ տեխնոլոգիական ցիկլի ժամանակահատվածի համար: Հողօգտագործման այլ տեսակների դեպքում սուբսիդիան տարեկան առավելագույնը 450 եվրո է՝ 1 հա-ի դիմաց:

Այնպիսի տարածքներում, որոնք բարձր արտադրողականության համար ոչ բարենպաստ են, օրինակ՝ լեռնային տեղանքով կամ հատուկ բնական պայմաններով տարածքները, ֆերմերները կարող են դոտացիաներ ստանալ՝ ապահովելու գյուղատնտեսական հողերի օգտագործումը, պահպանելով բնապատկերը և շրջակա միջավայրը: Այդպիսի վճարումները կազմում են 25-ից 200 եվրո 1 հեկտար գյուղատնտեսական հողատարածքի համար՝ տարածաշրջանում տնտեսական իրավիճակի և շրջակա միջավայրի վիճակից կախված, ինչպես նաև գյուղատնտեսական ձեռնարկության տեսակից: Բացի դրանից, ֆերմերները ստանում են հավելյալ մինչև 200 հա գյուղատնտեսական հողատարածք՝ շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած եկամուտների անկման դեպքում:

ԵՄ-ի ագրարային քաղաքականության մեջ նոր երևույթ էր գյուղատնտեսական ձեռնարկությունների արդիականացման և դիվերսիֆիկացման միջոցառումների ֆինանսավորումը: Ֆերմերները հնարավորություն ստացան արտադրության մեջ

ներդրումներ կատարել ԵՄ բյուջեից: Ստացված միջոցները պետք է ծառայեին արտադրական ծախսերի նվազեցմանը, բարելավմանը կամ դիվերսիֆիկացմանը, արտադրանքի որակի բարձրացմանը, շրջակա միջավայր պաշտպանմանը և կենդանիների բարեկեցության ու պաշտպանության բարելավմանը:

Այդ սուբսիդավորումը տրվում է միայն եկամտաբեր բիզնեսի դեպքում, որոնց սեփականատերերն ունեն բավարար մասնագիտական որակավորում և կատարել են բնապահպանական, հիգիենիկ և կենդանիների պաշտպանության համար

նախատեսված պահանջները: Որպես կանոն, այն չի կարող գերազանցել ներդրումների արժեքի 40%-ը՝ արտադրության համար բարենպաստ պայմաններ ունեցող վայրերում՝ 50%-ը: Այս գումարն ավելացել է երիտասարդ ֆերմերների համար համապատասխանաբար 45 և 55 տոկոսով:

Հատկապես անհրաժեշտ է նշել երիտասարդ ֆերմերների սուբսիդիաները: Վերջինս ներառում է 40 տարեկանից բարձր մարդկանց, ովքեր ունեն բավարար մասնագիտական որակավորում և առաջին անգամ ստանձնում են ձեռնարկության ղեկավարումը, իսկ ձեռնարկությունը պետք է կենսունակ լինի և համապատասխանի շրջակա միջավայրի և կենդանիների պաշտպանության, ինչպես նաև հիգիենայի նվազագույն պահանջներին: Դրամաշնորհը տրամադրվում է մինչև 25,000 եվրոյի մեկանգամյա վճարման տեսքով կամ վարկի տրամադրման ձևով, որը վերցվում է ձեռնարկության (կամ նրա մասնաճյուղի) գործունեության համար:

Ուշադրության է արժանացվել նաև գյուղմթերքի մշակման և մարքեթինգի բարելավման գործընթացը: Բնապահպանական, առողջության և կենդանիների պաշտպանության պահանջներին համապատասխան գործող արդյունավետ աշխատող ձեռնարկությունները՝ մրցունակությունն ու արտադրական ծախսերը բարելավելու նպատակով, կարող են ներդրումների ձևով դոտացիաներ ստանալ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և մարքեթինգի համար՝ արդյունքում ռացիոնալացնել իրացման գործընթացը, կիրառել նոր տեխնոլոգիաներ, բարելավել որակը և արտադրության ու վաճառքի հիգիենայի պայմանները, ինչպես նաև նպաստել նորարարությանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Խոշոր գյուղատնտեսական շրջաններում դրամաշնորհների չափն ընդհանուր ներդրումների 50%-ն է, իսկ մյուսների դեպքում՝ մինչև 40%:

Գյուղական վայրերում՝ վերը նշվածներին չվերագրվող, սակայն գյուղական զարգացման ծրագրերի հետ կապված այլ գործունեության աջակցման համար, կարող են տրամադրվել նաև նպաստներ: Նման գործողությունների թվում է օրինակ՝

տարածաշրջանային ներկայացուցչական կառույցների ստեղծումը, գյուղի ենթակառուցվածքի արդիականացումը, մշակութային վայրերի պաշտպանությունը, ազգային արհեստների, տուրիզմի և այլն ուղղությունների զարգացումը:

Հաշվի առնելով վերը նշվածը, պետք է հասկանալ, որ գյուղատնտեսական քաղաքականության իրականացումը բարդ և մեծ ջանքեր պահանջող գործընթացների փոխկապակցված աշխատանք է պահանջում և այս ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է լինեն շարժուն և դինամիկ:

Ագրարային քաղաքականություն (ՀՀ)

Հաշվի առնելով տևական շրջափակման և տնտեսական փլուզման մեջ գտնվող հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ագրարային ոլորտի վճռորոշ ազդեցությունը և ելնելով բնակչության պարենային ապահովվածության հույժ կարևոր խնդրից՝ գյուղատնտեսությունը մեր երկրում դիտվեց որպես տնտեսության առավել կարևորագույն բնագավառներից մեկը, և 1991թ. սկզբին այս ոլորտից էլ սկսվեց սեփականաշնորհումը՝ նպատակ ունենալով այն դարձնել շուկայական հարաբերությունները կարգավորող կայուն և արդյունավետ բնագավառ:

Անկախ պետականության առաջին մի քանի տարիները, գյուղատնտեսության կառավարման պետական գերկենտրոնացված համակարգը հաղթահարող Հայաստանի Հանրապետության համար որոնումների դժվարին շրջան էր՝ կապված տնտեսվարման ու սեփականության ձևերի ընտրության և ճգնաժամային իրավիճակի հետ, որը հնարավոր չէր հաղթահարել առանց պետական կարգավորման, պետության աջակցության ու հովանավորության:

ՀՀ գյուղատնտեսության զարգացման բնական նախադրյալներն ամենևին էլ հուսադրող չեն այն իմաստով, թե առանց պետական աջակցության հիշյալ ոլորտը կզարգանա: Այդ առումով նշենք, որ ՀՀ-ն դեպի ծով ելք չունեցող երկիր է, որը գտնվում է կովկասյան տարածաշրջանում: Երկիրը բաժանված է երկու հիմնական ջրավազանների. հարավ-արևմուտքում՝ Արաքս գետի, և հյուսիս-արևմուտքում՝ Կուր

գետի: Ցածրադիր գոտիներում, օրինակ՝ Արարատյան դաշտում, գերակշռում են հարուստ և խոր հողաշերտերը, իսկ բարձրադիր գոտիներում և թեք սարալանջերում՝ մակերեսային հողաշերտերը: Հանրապետությունում առանձնացված է գյուղատնտեսական 9 գոտի:

Գյուղատնտեսության ոչ արդյունավետ կազմակերպումը հասցրել է բնապաշտպանական իրավիճակի վատթարացման: Այսպես, անբավարար է գործում դրենաժային համակարգը, և հատկապես Արարատյան դաշտում բարձր տոկոս է կազմում հողերի աղակալումը: Բացի այդ, փոքր տնտեսությունները չեն պահպանում հողօգտագործման կանոնները:

ՀՀ գյուղատնտեսության մեջ արմատական վերափոխումների իրականացումը ենթադրում է տնտեսության կառավարման ձևերի, մեթոդների և պետության դերի արմատական փոփոխություն: Պետության կողմից իրականացվող ագրարային քաղաքականության տեսանկյունից նրա միջամտությունը պետք է ընդգրկի կարգավորման հետևյալ ոլորտները՝

ա) ագրոպարենային համալիրում տնտեսության մակրոտնտեսական կայունության ապահովում,

բ) ագրարային շուկայի ձևավորում՝ իր համապատասխան ենթակառուցվածքներով,

գ) պետական տեսչության մարմինների ձևավորում, նաև տեխնիկայի անվտանգ օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում,

դ) անհրաժեշտ օրենքների ընդունում՝ մասնավոր-կամավոր կոոպերատիվների, գյուղատնտեսական շուկաների ազատ մրցակցության, հակամենաշնորհային քաղաքականության և որակի հսկման կառուցվածքների ստեղծման նպատակով:

Մինչ անդրադառնալն ագրարային քաղաքականության հիմքերի ձևավորմանը Հայաստանի երրորդ Հանրապետությունում, հարկ է հետադարձ հայացք գցել ու

վերլուծել Հայաստանի ագրարային քաղաքականության էությունը խորհրդային կարգերի օրոք:

Սկսելով գյուղատնտեսությունից՝ նախ նշենք, որ XX դարի սկզբներին Հայաստանը հետամնաց ագրարային երկիր էր, որի բնակչության 85%-ը զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսությունն առանձնանում էր միակողմանի զարգացմամբ, մասնավորապես խոսքը վերաբերում է երկրագործությանը: Այդ երևույթն անհնար էր դարձնում արդյունավետ հողօգտագործման արմատավորումը:

Արտադրության զարգացման ցածր մակարդակով և էքստենսիվությամբ առանձնանում էր նաև անասնապահությունը: Հայաստանի գյուղատնտեսության հետամնացության հիմնական պատճառներից էին նյութատեխնիկական բազայի պարզունակությունը, միակողմանի զարգացումը, սակայն սակավահող մեր երկրում սահմանափակ էին նաև ոռոգման հնարավորությունները,

առանց որոնց՝ հանրապետության գրեթե բոլոր շրջաններում ոչ միայն բարձր բերքի ստացումը, այլև գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցումն ընդհանրապես անհնար էին: Տնտեսական ու սոցիալական նմանատիպ խնդիրների լուծման ուղղությամբ զգալի աշխատանք կատարվեց ՆԷՊ-ի կենսագործման տարիներին, սակայն դա տևեց մինչև 1928թ.: ԽՍՀՄ-ում 1932թ. արմատավորվեց գյուղատնտեսական մթերքների հարկային բնույթ կրող, պետական պարտադիր մթերումների համակարգ, որով մթերքների շատ տեսակներ անմնացորդ, իսկ մնացյալը խորհրդանշական գներով մթերում էր պետությունը (օրինակ՝ հացահատիկի 1 ցենտների դիմաց պետությունը կոլտնտեսություններին վճարում էր 80 կոպեկ):

Տասնամյակներ շարունակ գյուղի և քաղաքի միջև անհամարժեք փոխանակություն էր կատարվում: Երկրի ինդուստրացումն իրականացվում էր ի հաշիվ գյուղատնտեսության: Այդ և մի շարք այլ պատճառներով կոլտնտեսային հողօգտագործումը, փաստորեն, պետական-ֆեոդալական հողօգտագործման յուրահատուկ տեսք էր ստացել, որի հետևանքով գյուղացին կորցրել էր տիրոջ զգացումը, արդյունավետ չէր օգտագործում տարիների ընթացքում ստեղծված արտադրական ներուժը, ցածր էր գյուղատնտեսական արտադրության սոցիալ-տնտեսական արդյունավետությունը, նվազել էին գյուղատնտեսական արտադրության զարգացման տեմպերը հատկապես 1980-ական թթ. երկրորդ կեսին: Որպես օրինակ՝ նշենք, որ Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքի տարեկան միջին ծավալը 1986-1990թթ. կազմել է 1981-1985թթ. ծավալի 94,1%-ը:

Համայնավարական-հանրային ագրարային համակարգի ճգնաժամի հիմնական պատճառը մասնավոր սեփականության և մասնավոր ձեռներեցության բացակայությունն էր: Այդ տնտեսակարգը կազմավորվել էր մասնավոր տնտեսության փլատակների վրա և հայտարարվել էր օրենքից դուրս: Այդ արհեստածին տնտեսակարգը, ինչ խոսք, երկար գոյատևել չէր կարող:

Գյուղատնտեսական արտադրության աճի տեմպերի անկումը հաղթահարելու, երկրաշարժի հետևանքները վերացնելու, հանրապետությունը խորացող ճգնաժամից դուրս բերելու, արտադրության կազմակերպումն ու արտադրանքի իրացումը կատարելագործելու, բնակչությանը պարենով բավարարելու և հանրապետության կենսագործունեությունը կարգավորելու, սեփականության և տնտեսվարման բազմաձևության և շուկայական հարաբերություններին անցնելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական մի շարք ուրիշ

խնդիրներ արդյունավետ լուծելու, գյուղի և գյուղատնտեսության առաջընթացն արագացնելու շահերը պահանջում էին արմատապես վերակառուցել արտադրատնտեսական հարաբերությունները գյուղում, կատարել ագրարային վերափոխումներ: Այլ խոսքով՝ տնտեսական կյանքի նախորդ իրադարձություններով նախապատրաստված՝ օբյեկտիվ անհրաժեշտության վերածված ագրարային վերափոխումները հանրապետությունում իրականացվող տնտեսական, ագրարային քաղաքականության առանցքային հիմնախնդիր էին դարձել:

Այս տեսակետից նորանկախ Հայաստանի Հանրապետություն հռչակած (1991թ.) հողի սեփականաշնորհումը համապատասխանում էր ժողովրդի սպասումներին. այն կոչված էր վերածնելու մասնավոր գյուղացիական դասակարգը և նրա օգնությամբ գյուղատնտեսությունը դուրս բերելու համայնավարական ագրարային ճգնաժամից: Այլ հարց է, որ հողի սեփականաշնորհման ընթացքում թույլ տրվեցին մի շարք կոպիտ խախտումներ, որի հետևանքով մեր հանրապետությունը ոչ միայն չհասցրեց դուրս գալ համայնավարական կարգերից ժառանգած ագրարային ճգնաժամից, այլև նորաստեղծ ագրարային համակարգը հայտնվեց ավելի խոր ճգնաժամի մեջ:

Ագրարային ոլորտի պետական կարգավորման արդի խնդիրները

Տնտեսության ագրարային ոլորտի, մասնավորապես՝ գյուղատնտեսության առանձնահատկությունները պահանջում են պետական միջամտություն և կարգավորում: Վերջիններս իրականացվում են վարչական և տնտեսական եղանակներով: Տնտեսական կարգավորման հիմնական գործիքները պետական աջակցության տարբեր ծրագրերն ու հարկային լծակներն են:

Ընդունված մեթոդաբանության համաձայն, հիմնախնդրի տրամաբանական ներկայացման նպատակով, տարանջատվել են վարչական և

տնտեսական կարգավորման ուղղությունները: Հայտնի է, որ գյուղատնտեսության հիմնական առաքելությունը բնակչության պարենային անվտանգության ապահովումն ու բարեկեցության բարձրացումն է: Այս հիմնադրույթը հաստատելու համար նշենք, որ ներկայումս ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության միջոցառումների և դրանց իրականացման ֆինանսական միջոցների զգալի հատվածը միտվում է ոչ այնքան ոլորտի զարգացմանը, որքան տնտեսական աճի խթանմանը: Մինչդեռ, գործոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղատնտեսական արտադրության ցածր եկամտաբերության, իսկ տարածաշրջանային կտրվածքով՝ վնասաբերության պայմաններում տնտեսական աճը չի կոռելացվում երկարաժամկետ հատվածում ոլորտի զարգացման և գյուղական բնակչության բարեկեցության բարձրացման ցուցանիշների հետ: Այսինքն՝ տնտեսական աճը միշտ չէ, որ վկայում է տնտեսական զարգացման մասին: Տնտեսական աճը ենթադրում է կարճաժամկետ հատվածում, հիմնականում միանգամյա ազդեցության գործոններով համախառն արտադրանքի ավելացում, այնինչ զարգացումը նպատակաուղղված է երկարատև ժամանակահատվածում կայուն արդյունավետության ապահովմանը: ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման գործող համակարգը դեռևս էական պայմաններ չի ստեղծում զարգացման նախադրյալների ձևավորման, ոլորտի մրցունակության ու եկամտաբերության բարձրացման համար: Այս խնդրի կարգավորման համար շահագրգիռ պետք է լինի ոլորտի կառավարման լիազոր մարմինը, որը ներկա պայմաններում այս գործառույթն իրականացնելու կարողություն չունի: Փաստորեն, կառավարող մարմինը չի տիրապետում կառավարման օբյեկտի գործունեության արդյունավետության ցուցանիշներին և առաջնորդվում է միայն տնտեսական աճ ապահովելու մղումով: Օրինակ՝ մշակվող հողատարածության հաշվով

սուբսիդավորվող գնով դիզելային վառելիքի տրամադրումը որոշակիորեն թեթևացնում է արտադրողի ծախսերը և խթանում մշակվող տարածության ավելացումը, մինչդեռ այս, ինչպես նաև սուբսիդավորվող գնով սահմանափակ քանակությամբ պարարտանյութի, վարկային միջոցների և սերմերի հատկացումը՝ որոշակիորեն նպաստելով ոլորտի համախառն արտադրանքի աճին, էական ազդեցություն չի գործում հատկապես բարձրադիր ու հեռավոր գյուղական բնակավայրերի ընտանեկան տնտեսությունների եկամտի ավելացման վրա:

Գյուղատնտեսության ճյուղի կայուն զարգացման վրա դեռևս մեծ է բնական գործոնների ազդեցությունը: Այդ ռիսկերի կառավարման համար կարևոր նշանակություն ունեն երկարաժամկետ պետական աջակցության գործիքները, տեխնիկական, տեխնոլոգիական և ապահովագրական համակարգերի զարգացումը: Մինչդեռ, ՀՀ կառավարության ագրարային քաղաքականության միջոցառումների գերակշիռ մասը կրում են կարճաժամկետ, առանձին դեպքերում՝ էպիզոդիկ բնույթ, որի պատճառով գյուղատնտեսական սուբյեկտների կողմից ըստ արժանվույն չեն ընկալվում և ակնկալվող արդյունք չեն ապահովում:

Գյուղատնտեսության պետական աջակցության արդյունավետ գործիքների և կառուցակարգերի մշակման համար կատարել ենք ՀՀ գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությանը գերազանցապես առնչվող պետական աջակցության մեխանիզմների անկատարությանը և շահառուների կողմից աջակցության ծրագրերի ոչ ամբողջական ընկալում: Վերջինս պայմանավորված է որոշակի պատճառներով, որոնցից հատկանշական են.

1. Ծրագրերի մի մասը շրջանցում է իրական շահառուին և տրամադրվում որոշակի ծառայություններ մատուցող կառույցներին (ոռոգման ջրի վարձավճարի,

հակահամաճարակային, բույսերի պաշտպանության, հողաբարելավման, արոտների ջրարբիացման և այլ միջոցառումներ):

2. Երկրորդ խումբ ծրագրերն ուղղորդված են որոշակի ներդրանքների և ծառայությունների գների սուբսիդավորմանը, որն առաջացնում է մենաշնորհային իրավիճակ և չի նպաստում գների ու վարկի տոկոսադրույքի շուկայական կարգավորմանը:

Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունը բնութագրվում է ոչ միայն բյուջետային ֆինանսավորման բացարձակ մեծությամբ, այլև դրա կառուցվածքով և օգտագործման արդյունավետության ցուցանիշներով: ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս, որ բյուջետային ֆինանսավորման ձևավորված չափաբաժնի շրջանակներում ծախսերի ուղղությունները հիմնականում հիմնավորված են: Այդուհանդերձ, ինչպես նշվեց, այսպիսի աջակցությունը դեռևս էական հիմքեր չի ստեղծում ոլորտի երկարաժամկետ զարգացման համար: Ուստի ներկայացնում ենք ՀՀ գյուղատնտեսության զարգացում ապահովող պետական կարգավորման քաղաքականության հիմնական ուղղություններն ու դրանց իրականացման կանոնակարգերը:

Կառավարման համակարգը: ՀՀ գյուղատնտեսության պետական կարգավորման կատարելագործումը պետք է նպատակաուղղվի երկարաժամկետ հատվածում ճյուղի զարգացմանը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ոլորտի կառավարման համակարգը բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, որոնք ոչ բոլոր դեպքերում են եղել օբյեկտիվ ու հիմնավորված: Ներկայումս ագրարային քաղաքականությունը, ըստ ենթաոլորտների, մշակում և իրականացնում է տարբեր պետական կառավարման մարմիններ՝ գյուղատնտեսության նախարարությունը (գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն), ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը (գյուղական բնակավայրերի զարգացում, ոռոգման համակարգ), ՀՀ կառավարության աշխատակազմը (գյուղական կարողությունների և շուկայավարման հնարավորությունների ընդլայնում), ՀՀ կառավարությանը կից անշարժ գույքի պետական կադաստրը (հողային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման մշտադիտարկում), ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ագրովերամշակման և լոգիստիկ համակարգի զարգացում), ՀՀ գիտության և կրթության նախարարությունը (գիտական ապահովում և մասնագիտական կադրերի պատրաստում), ՀՀ կենտրոնական բանկը (ապահովագրության և վարկավորման քաղաքականություն) և այլն, ինչը նվազեցնում է ոլորտի ամբողջական քաղաքականության մշակման, իրականացման և հաշվետվողականության արդյունավետությունը: Ոլորտում

խնդիրների ավելի դիպուկ լուծման համար արդյունավետ կլինի վերադառնալ ագրարային ոլորտի համալիր կառավարման սկզբունքին և վերոհիշյալ լիազորությունները տրամադրել կառավարման մեկ լիազոր մարմնի:

Իրավական հիմքերը: Հանրապետությունում գոյություն չունի որևէ իրավական ակտ, որով սահմանված լինեն պետական ագրարային քաղաքականությունը, դրա նպատակները, սկզբունքները, ուղղությունները և, ընդհանրապես, ագրարային ոլորտում պետության պատասխանատվությունը և պարտավորությունները: Հրամայական պահանջ է դարձել գյուղատնտեսության ոլորտում վերաիմաստավորել պետության դերը՝ պասիվ բարեփոխողից վերածելով երկրի կայուն զարգացման մասնակցի և պատասխանատուի: Անհրաժեշտ է ձևավորել գյուղատնտեսության պետական աջակցության ամբողջական համակարգ: Տարբեր բնույթի սուբսիդիաների, դոտացիաների և արտոնությունների տրամադրումը պետք է դարձնել ագրարային քաղաքականության հիմնական նպատակը և բովանդակությունը: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է ընդունել «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որը ըստ գյուղատնտեսության նախարարության դեռ 2013 թ.-ի տվյալների մշակման փուլում է: Այս օրենքով կսահմանվի.

Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական քաղաքականությունը, դրա նպատակները, սկզբունքները, ուղղությունները, իրականացման միջոցները, պետական քաղաքականությունը գյուղատնտեսական արտադրանքի, հումքի և պարենամթերքի շուկայի կարգավորման բնագավառում, գյուղատնտեսության ոլորտին պետական աջակցության տրամադրման սկզբունքները, ուղղությունները և մեխանիզմները, գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագիրը,

դրա հաստատման կարգը և իրականացումը, պետական ծրագրի ընթացքի և արդյունքների մասին ազգային զեկույցը, դրա բովանդակությունը և ներկայացման կարգը, գյուղատնտեսության և գյուղի զարգացման բնագավառներում տեղեկատվական համակարգի ձևավորումը:

«Գյուղատնտեսության և գյուղի զարգացման պետական ծրագրի» ընդունումը: Ծրագրով պետք է սահմանվեն երկարաժամկետ հատվածում (տասնամյա) գյուղատնտեսության զարգացման և գյուղատնտեսական արտադրանքի, հումքի ու պարենամթերքի շուկայի կարգավորման նպատակները, խնդիրներն ու հիմնական ուղղությունները, կանխատեսումների վրա հիմնված գյուղատնտեսության զարգացման հիմնական ցուցանիշները, ըստ առանձին տարիների իրականացվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքները՝ քանակական և որակական ցուցանիշները, միջոցառումների համար պահանջվող ֆինանսական միջոցները: Պետական

ծրագիրը պետք է մշակի լիազոր մարմինը և մինչև պետական ծրագրի առաջին ֆինանսական տարվան նախորդող տարվա հուլիսի մեկը ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

Վարչական ռեգիստրի վարումը: Կառավարման արդյունավետությունն էապես կախված է ոլորտի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության ստացումից և տիրապետումից: Ներկայումս ՀՀ ԱՎԾ-ի կողմից գյուղատնտեսության ոլորտում վարվում է վերլուծական վիճակագրություն: Այսինքն՝ վիճակագրական տվյալների հավաքագրումը չի կատարվում ըստ տնտեսվարող սյուբեկտների, համայնքային ամփոփ տվյալների և ընտրանքային հետազոտությունների արդյունքների ընդհանրացման, որը ընդհանուր վիճակագրության առումով ընդունելի, սակայն

բավարար չէ համակարգի մանրակրկիտ վերլուծության, իրատեսական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև հասցեական պետական աջակցության ու դրա արդյունքների գնահատման համար: Ուստի առաջիկա տարիների ընթացքում անհրաժեշտ է ստեղծել գյուղատնտեսական վարչական վիճակագրական ռեգիստր:

Ռազմավարական հետազոտությունների կենտրոն: ՀՀ ագրոպարենային համալիրի արդյունավետ կառավարումը պահանջում է հիմնել ռազմավարական հետազոտությունների կենտրոն, որը պետք է վերլուծի ագրարային քաղաքականության արդյունքները, մշակի ոլորտին վերաբերող օրենքների, կանոնակարգերի, հայեցակարգերի նախագծեր, նորարարական և ներդրումային ծրագրեր, ինչպես նաև ներկայացնի ոլորտի կարողությունների հզորացման միջազգային համագործակցության վերաբերյալ առաջարկություններ:

Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը: Կառավարման արդյունավետության բարձրացման համար կարևոր և անհրաժեշտ է ապահովել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում: Այդ նպատակով պետք է ներդնել քաղաքականության մշակման առանձին աշխատանքները կառավարության կողմից հասարակական կազմակերպություններին պատվիրելու մեխանիզմը: Բացի այդ, ոլորտի զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցող օրենքների, որոշումների, ռազմավարական ծրագրերի և հայեցակարգերի նախագծերը մինչև ՀՀ կառավարություն ներկայացնելը պետք է քննարկել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Արտադրողների մասնագիտական միություններ: Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների շահերի պաշտպանության, մասնագիտական և այլ խորհրդատվական ծառայությունների մատուցման, գյուղատնտեսական արտադրանքի ծավալի, պարենամթերքի գների և տնտեսվարողների եկամուտների վերաբերյալ կառավարության հետ բանակցությունների վարման ու համաձայնագրերի մշակման, ինչպես նաև ֆերմերների, պաշտոնատար անձանց, տնտեսության ներկայացուցիչների և բնակչության շրջանում տեղեկատվության տարածման գործընթացների արդյունավետ կազմակերպման համար մեծ պահանջ է դարձել արտադրողների մասնագիտական միությունների ձևավորումը:

Գյուղատնտեսական կոոպերացիա: Արտադրության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, երաշխավորված գնով արտադրանքի իրացման, գյուղատնտեսական տեխնիկայի, վառելիքի, պարարտանյութերի մատակարարման, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրման գործընթացների արդյունավետ կազմակերպումը հնարավոր է ապահովել գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով: Կոոպերատիվները կարող են նաև զգալիորեն նպաստել ագրարային հատվածի և տնտեսության մյուս ճյուղերի միջև տնտեսական կապերի ձևավորմանը և զարգացմանը: Այս ոլորտում պետության քաղաքականությունը պետք է նպատակաուղղել գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմանը, մասնավորապես՝

պետական աջակցության շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվող տարբեր սուբսիդիաներն ու դրամաշնորհները հատկացնել

կոոպերատիվների միջոցով:

Երաշխավորված գին: Անհրաժեշտ է սահմանել կարևորագույն գյուղատնտեսական արտադրատեսակների (հացահատիկ, միս, կաթ) իրացման երաշխավորված գներ, որոնք տարվա ընթացքում կարող են ճշգրտվել՝ հաշվի առնելով արձանագրված գնաճի տեմպը: Երաշխավորված գների սահմանման համար անհրաժեշտ է հիմք ընդունել երկրի բարենպաստ բնակլիմայական պայմաններում արտադրված կարևորագույն գյուղատնտեսական մթերքների հաշվարկված ինքնարժեքը: Անբարենպաստ պայմաններում գյուղատնտեսական մթերքների արտադրության համար կհատկացվեն լրացուցիչ դոտացիաներ: Տարվա ընթացքում ֆերմերային տնտեսություններն ազատ են իրենց արտադրանքի տնօրինման հարցում և այն կարող են վաճառել շուկայական գներով, որոնք հնարավոր է լինեն երաշխավորված գնից բարձր, ցածր կամ հավասար: Իրացման գինը երաշխավորված գնից ցածր լինելու դեպքում տարվա վերջում ֆերմերային տնտեսությունը կստանա փոխհատուցում նշված տարբերության չափով:

Շուկայում երաշխավորված գնով իրացման ենթակա հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ավելցուկի առաջացման դեպքում կառավարության կողմից կիրականացվի դրանց ինտերվենցիոն գնումը երաշխավորված գնով և կապահովվի գնված ապրանքների հետագա տնօրինումը՝ պահպանումը, վերամշակումը, իրացումը, փոխանակումը և այլն:

Արտահանման խթանումը: Արտահանման ուղղվածություն ունեցող և արտաքին շուկայում մրցունակ արտադրանք արտադրող կազմակերպություններին հարկ է տրամադրել վարկային երաշխիքներ, դրամաշնորհներ և տեխնիկական

օժանդակություն: Առավելապես նախընտրելի են՝ պտուղ-բանջարեղենի վերամշակման, գինեգործական, օրգանական գյուղատնտեսական մթերքների, չոր մրգերի, կաթնամթերքի և մսամթերքի առանձին տեսակների, թարմ մրգերի, արտադրության, հետբերքահավաքային տեխնոլոգիաների կատարելագործման և կարողությունների հզորացման, մանր եղջերավոր անասունների արտահանման, շուկայահանման ենթակառուցվածքների զարգացման և ներդրումների խթանման ծրագրերը:

Գյուղատնտեսության տեխնիկական վերազինումը և տեխնիկայի արդյունավետ օգտագործումը: Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածության ներկա վիճակը, հատկապես առկա տեխնիկայի ծայրաստիճան մաշվածությունը և նորացման միանգամայն անբավարար տեմպերը, հիմք են տալիս կանխատեսելու, որ առաջիկա տասնամյակի վերջում ինտենսիվ մշակության չի ենթարկվի վարելահողերի 55-60 տոկոսը: Պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացման ընդունելի տարբերակների (լիզինգ կամ տարաժամկետ վճարում, վարձակալություն, կոոպերացիա և այլն) կիրառումով ներմուծված տեխնիկան հատկացնել գյուղական համայնքներին, սպառողական կոոպերատիվներին և առևտրային գյուղատնտեսական ձեռնարկություններին, պետական աջակցություն ցուցաբերել մեխանիզատորական և գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը, շարժական տեխնիկական օգնության ծառայությունների

զարգացմանը, հողի նվազագույն և զրոյական (անվար) մշակության տեխնոլոգիայի ներդրում և այդ նպատակով՝ համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման աջակցություն:

Ագրարային ոլորտի արտաքին տնտեսական կապերի զարգացման քաղաքականությունն: Ագրարային ոլորտի արտաքին տնտեսական կապերի զարգացումը, որոշակի առանձնահատկություններով հանդերձ, հիմնականում պայմանավորված է երկրի արտաքին տնտեսական քաղաքականությամբ: Մասնավորապես՝ ԱՀԿ անդամության շրջանակում Հայաստանն օգտվում է Ազգերի առավել բարենպաստության ռեժիմից, բացի այդ ազատ առևտրի համաձայնագրեր ունի Վրաստանի և ԱՊՀ երկրների հետ, բացառությամբ Ադրբեջանի և Ուզբեկստանի: Ներկայումս խիստ կարևորվում է ԵՏՄ-ին անդամակցության և Հայաստան-Եվրոպական միություն խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումից հրաժարվելու պայմաններում չկորցնել Եվրոմիության հետ համագործակցության եզրերը: Հայաստանն օգտվում է Եվրոմիության (GSP+)՝ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգից», որը հնարավորություն է տալիս տեղական ծագման շուրջ յոթ հազար ապրանքատեսակ ԵՄ շուկա արտահանելու զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով: Արտաքին տնտեսական ակտիվության տեսանկյունից կարևորվում է մրցունակ ենթակառուցվածքների ապահովման խնդիրը: Ենթակառուցվածքների արդիականացումն իրականացվում է համապատասխան ոլորտային ծրագրերով, մասնավորապես՝ տրանսպորտային ենթակառուցվածքում կարևորագույն են համարվում Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի, Իրան-Հայաստան երկաթգծի, «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հարակից տարածքում միջազգային լոգիստիկ կենտրոնի և ազատ տնտեսական գոտու ծրագրերը:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):